ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 14-ին, ուրբաթ, «Տեառնընդառաջ»։ Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և քարոզեց «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց» բնաբանով։

* * *

Փետրվարի 15-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում, Վեհափառ Հայրապետը կրոնաբարոյական թեմայով բովանդակալից դասախոսություն կարդաց Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության համար։ Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

* * *

Փետրվարի 16-ին, կիրակի («Արտաքսման»), Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը։

* * *

Փետրվարի 23-ին, կիրակի («Անառակին»), Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը՝ «Աստուած ոչ կամի զմահ մեղաւորի» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Փետրվարի 29-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանում, Վեհափառ Հայրապետը խոսեց Մայր Աթոռի միաբանության և ուսանողության, հայրապետական Իր. շրջորդ ուղևորության տպավորությունների և հուշերի մասին։

* * *

Մարտի 1-ին, կիրակի («Տնտեսին»), Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը՝ «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մարտի 1-ին, կիրակի, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը՝ «Տուր զհամար տնտեսութեան քո» բնաբանով։

* * *

Մարտի 8-ին, կիրակի («Դատաւորին»), Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը, քարոզեց Արարատյան թեմի փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը՝ «Տէր, ուստ մեզ կալ յաղօթս» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մարտի 8-ին, կիրակի, Երևանի Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը՝ «Աստուած իմ, բաւական դիս զմեղաւորս» բնաբանով։

* * *

Մարտի 14-ին, շաբաթ, «Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարշարանացն և մտին ի վիրապն»։ Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առաջ, պատարագեց Բաքվի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հուսիկ

եպիսկոպոս Սանթուրյանը և քարոզեց «Զպակասութիւն չարչարանաց Տեառն ի մարմնի քում կրեցեր» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *
*

Մարտի 15-ին, կիրակի («Գալստեան»), Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, բնարան ընտրելով «ՅԱթոռն Մովսիսի նստան դպիրքն և Փարիսեցիք»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *
*

Մարտի 21-ին, շաբաթ, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր Տաճարում հոգեհանգստյան պաշտոն կատարվեց Երևանի Ս. Կաթողիկե եկեղեցու ծխատեր, հայր և որդի Տ. Ստեփանոս (ծնված 1828 թ.) և Տ. Խաչատուր (ծնված 1873 թ.) Տեր-Գրիգորյան քահանաների հիշատակին, նրանց հարազատների խնդրանքով։

Լուսահոգի քահանա հայրերը եղկար տարիներ ծառայել են Երևանի Ս. Կաթողիկե եկեղեցում և մահացել են նույն՝ 1913 թվականին։

* *
*

Մարտի 22-ին, կիրակի, «Ծաղկազարդ»։ Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և քարոզեց «Եւ դղրդեցաւ քաղաքն ամենայն» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան, ավանդական հանդիսությամբ, կատարվեց «Դոնբացէք»-ի արարողությունը։

* *
*

Մարտի 26-ին, Ավագ հինգշաբթի, «Յիշատակ ընթրեաց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Երեկոյան ժամը 5-ին կատարվեց «Ոտնաբուայ»-ի արարողությունը, հանդիսադրությամբ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի։

Ժամը 7-ին Մայր Տաճարում պաշտվեց Փրկչի մատնության և չարչարանաց կարգը։

Արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը և քարոզեց Հիսուսի փրկագործ չարչարանաց մեծ խորհրդի մասին։

* *
*

Մարտի 27-ին, Ավագ ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, Մայր Տաճարում պաշտվեց Հիսուսի խաչելության կարգը։

Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց Քրիստոսի թաղման կարգը, եկեղեցական թափորով։

* *
*

Մարտի 28-ին, շաբաթ, «Ճրագալոյց Զատկի»։ Երեկոյան ժամը 5-ին, Մայր Տաճարում, Հոգևոր Ճեմարանի ուսանողները ընթերցեցին Դանիելի գիրքը։ Ճրագալուցի հանդիսավոր պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, որն արարողության ավարտին եկեղեցական թափորով առաջնորդվեց Վեհարան։

* *
*

Մարտի 30-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ննջեցելոց»։

ՀԱՅԿ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ